Մենք էլ ենք փորձագետներ!

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության

INTERNATIONAL
ACCOUNTABILITY PROJECT

Այս Ստուգացանկում դուք կգտնեք այն հիմնական ռազմավարությունների և առաջարկների ամփոփ տարբերակը, որոնք ներառված են Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության Գործնական ուղեցույցում: Այս Ստուգացանկից բացի առկա է նաև Հարցաշարի ձևանմուշ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության համար, որը կարող եք համապատասխանեցնել և կիրառել ձեր համայնքի համար:

Ուղեցույց

Ստուգացանկ

Հարցաշարի ձևանմուշ

© Հեղինակային և պատճենման իրավունք 2018թ., Միջազգային հաշվետվողականության ծրագիր

www.accountabilityproject.org

Դիզայնը և էջադրումը՝ Լետիցիա Ֆարիզատոյի

Նկարազարդումը՝ Հարիս Իչվանի

Ինչ է համայնքի ղեկավարած հետազոտությունը.

Ի՞նչ եք մտածում, երբ լսում եք «հետազոտություն» բառը: Կարծում եք, թե հետազոտությունն ինչ-որ հեռավոր բան է, որն անում են ուրիշնե՞րը: Արդյո՞ք այն անհասանելի ինչ-որ բան է, որն անում են միայն համալսարանի պրոֆեսորները:

Պարտադիր չէ, որ հետազոտությունը սրանց նման մի բան լինի: Մենք կարծում ենք, որ այն պետք է համատեղ աշխատանք լինի, գործընթաց, որում համայնքները իշխանություն ունեն որոշել, ղեկավարել և իրականացնել հետազոտություն իրենց ընտրած թեմայի շուրջ և որտեղ ամեն մասնակից ազատ է նպաստել, փոխանակել և վերարտադրել կուտակված գիտելիքը:

Մեկոնգի համայնքային ինստիտուտը սահմանում է համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը որպես«**գիտելիքի փնտրտուք՝ հիմնված տեղական փորձի վրա, համայնքի անդամների կողմից և համայնքի բարօրության համար»:** Այլ տեսակի հետազոտությունները սովորաբար սկսում են համայնքի անդամ չհանդիսացող անձանցից հարցեր ստանալով:

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության դեպքում համայնքի անդամներն են որոշում իրենց թեմաները, հարցերն ու գործընթացը, ինչը նրանց թույլ է տալիս ստեղծել, վերլուծել և նկարագրել սեփական փորձառությունները: Այս տեսակի հետազոտության դեպքում համայնքը հիմնվում է իր սեփական գիտելիքի, սովորույթների և ավանդույթների վրա և հանդիսանում է հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալների տերը: Համայնքներն այլևս չպետք է լինեն հետազոտության թիրախ կամ առարկա: Ոչ միայն հետազոտողներն ու ակադեմիական ոլորտի աշխատողները, այլ **համայնքի անդամներն էլ են փորձագետներ:**

Իրականում, երբ համայնքի անդամներն իրենց սեփական հետազոտությունն են իրականացնում, նրանք կարող են այնպիսի տվյալներ բացահայտել, որոնք դրսի մարդիկ ի վիճակի չեն անել: Համայնքներն այնպիսի գիտելիքների են տիրապետում իրենց շրջակա միջավայրի մասին, որոնք որոշումներ կայացնողները և պլանավորողները կարող է և չիմանան: Հաճախ, հետազոտության գործընթացն ինքը համայնքներին օգնում է ավելի լավ հասկանալ իրենց խնդիրները, վստահություն ձեռք բերել իրենց գիտելիքների և գաղափարների հանդեպ, ամրապնդել համերաշխությունը և հաշվետվողականությունը համայնքի անդամների միջև և անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել համայնքի կազմակերպման համար: Հետազոտության գործընթացից քաղված հմտություններն ու տվյալները միասին կարող են օգտակար լինել համայնքի կողմից նախաձեռնվող շահերի պաշտպանության միջոցառումներ կազմակերպելու համար:

Համայնքի կողմից իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այլընտրանքներ հնարավոր են, և որ ամբողջ զարգացման գործընթացը կարող է այնպես վերափոխվել, որ **համայնքները վերականգնեն իրենց իշխանությունը:** Երբ համայնքներն իրենց ու իրենց նպատակները դիտարկում են որպես զարգացման գործընթացի առանցք, համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը կարող է հզոր գործիք դառնալ:

Ելնելով այսպիսի հետազոտության առկա մեթոդներից՝ մենք մեր գործընկերների հետ մշակել ենք այս Ստուգացանկը, որը կարող են որպես գործիքակազմ կիրառել համայնքները, համայնքի կազմակերպիչները և տեղական քաղաքացիական հասարակության խմբերը, որոնք հետաքրքրված են համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությամբ:

Այս Ստուգացանկը ներառում է հիմնական քայլեր առ այն, թե համայնքն ինչպես կարող է կիրառել իր կողմից առաջնորդվող հետազոտությունը՝ որոշելու իրենց զարգացման առաջնահերթությունները:

Ստորև ներկայացված են համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության **նախապատրաստման**, **իրականացման** և **ջատագովության** հիմնական քայլերը:

1	**Նախապատ-րաստում**	1. Որոշեք հետազոտության թեման, 2. Հավաքեք հետազոտական թիմ 3. Որոշեք աջակիցներին և ազդեցություն ունեցողներին 4. Լուծեք անվտանգության հետ կապված ռիսկերը 5. Մշակեք հետազոտության գործիքակազմը
2	**Հետազոտության իրականացում**	6. Ներգրավեք համայնքին հետազոտության ողջ ընթացքում 7. Հավաքեք տվյալները 8. Պատրաստեք նախնական արդյունքները և առաջարկները 9. Ներկայացրեք նախնական տարբերակները հետադարձ արձագանքի համար
3	**Ջատագով-ություն**	1. Ներկայացրեք վերջնական արդյունքները և առաջարկները 2. Գործե՛ք միասին 3. Խորհրդակցեք

ՄՀԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում Asia Pacific Forum on Women Law and Development (APWLD) կազմակերպությանը և Մեկոնգի համայնքային ինստիտուտին (ՄՀԻ)՝ իրենց խորամիտ դիտարկումների համար:

1

Նախապատրաստում

1. ՈՐՈՇԵՔ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

Համայնքային հանդիպում կամ մի քանի խմբային քննարկում կազմակերպեք՝ ներառելով հնարավորինս շատ մարդկանց և որոշեք ամենակարևոր հարցերը հետազոտության համար: Ներառեք կանանց, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց և համայնքի այլ անդամների, ովքեր, հնարավոր է, թերներկայացված են կամ դուրս են մնացել նմանատիպ քննարկումներից:

Հանդիպումը պլանավորելիս նախ մտածեք, թե արդյոք **անվտանգ է կազմակերպել հանդիպում, որտեղ հրապարակավ կքննարկվեն ձեր համայնքի խնդիրները:** Ռազմավարության տեսակետից պետք է ճիշտ ընտրել հանդիպման վայրը՝ խուսափելու իշխանությունների կողմից անհարկի ուշադրություն գրավելուց, օրինակ՝ եկեղեցում ավանդական արարողության կամ սովորական համայնքային հանդիպման ժամանակ: Որոշեք, թե ովքեր են համայնքի վստահելի առաջնորդները և խորհուրդ հարցրեք նրանցից: Եթե մեծ հանդիպում կազմակերպելը շատ ռիսկային է, կարող եք սկսել ձեր համայնքի տարբեր խմբերի հետ փոքր ոչ պաշտոնական քննարկումներից:

Երբ հանդիպեք, որոշեք հետազոտության թեման և թե ինչ կուզենաք սովորել: Միասին որոշեք, թե ինչպես իրականացնել հետազոտությունը, ինչ դերաբաշխումներ, իրատեսական ժամկետ և գործիքակազմ է անհրաժեշտ ձեր հետազոտության համար:

Թեման, որը կընտրեք, կարող է տարբեր զարգացման բանկերի, ծրագիր մշակողների կամ կառավարության կողմից այլ տեսանկյունից դիտարկվել: Նրանց պնդումներին կարելի է հակափաստարկներ բերել և դրանք հարցականի տակ դնել, մանավանդ, եթե դրանք սխալ կամ թերի են: Օրինակ՝ համայնքները, որոնք հետազոտում են որևէ ծրագրի՝ մարդու և շրջակա միջավայրի վրա առկա և հնարավոր ազդեցությունը, կարող են տվյալներ տրամադրել ծրագրի «պաշտոնական փաստաթղթերից» պակասող, դուրս թողնված կամ սխալ տեղեկությունների փոխարեն:

Ռեսուրսների արկղ

Խնդրի որոշումն ու վերլուծումը. գործիքակազմ, որը ռեսուրսներ և խորհուրդներ է տրամադրում գործողություններ իրականացնելու, ուսուցանելու, մարդկանց վերապատրաստելու, որպեսզի կազմակերպվեն համայնքի զարգացման համար

→ bit.ly/ComAnalyze

Village Book ActionAid-ի կողմից մշակած Village Book-ում տեղ գտած գործընթացում մարդիկ վերլուծում և փաստագրում են իրենց ընդհանուր իրավիճակը՝ հասկանալու իրենց գյուղի խնդիրների պատճառները

→ bit.ly/VillageBookActionAid

2. ՀԱՎԱՔԵՔ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԻՄ

Դիմեք համայնքի անդամներին՝ հետազոտական թիմ ձևավորելու համար: Թիմի անդամները տեղեկություններ են փոխանակում համայնքի ավելի լայն շերտերի հետ, հարցեր են տալիս և ի մի բերում հավաքած տեղեկությունները: Թիմը պետք է ներկայացնի համայնքում բնակվող տարբեր տեսակի մարդկանց, հատկապես թերներկայացվածներին կամ դուրս մնացածներին: Թիմի անդամների քանակը կախված կլինի հետազոտության ծավալից, սակայն սովորաբար առնվազն 10 մարդու կարիք կլինի:

Ձեր թիմին վերապատրաստելը շատ կարևոր է: Թիմի հետ միասին հասկացեք, թե ինչու է ձեր համայնքը որոշել իրականացնել այս հետազոտությունը, որոնք են դրա նպատակները և ամեն անդամի դերը: Թիմի անդամները պետք է իրենց հարմար զգան մասնակիցների հետ անհատապես կամ փոքր խմբերով հաղորդակցվելու և նրանցից հարցազրույց վերցնելու հարցում: Հիշեք՝ հետազոտության գործընթացը փաստացիորեն տեղեկությունների փոխանակում է, և մասնակիցները հավանաբար հարցեր կունենան: Հետազոտական թիմի ամեն անդամ պետք է հասկանա հետազոտության թեման և համայնքի կողմից առաջնորդվող զարգացման պլանները:

Ռեսուրսների արկղ

Վերապատրաստման ձեռնարկ համայնքահեն հետազոտողների համար Ձեռնարկ, որտեղ զետեղված են վարժություններ և խմբային աշխատանքներ համայնքի հետազոտողների համար, ներառյալ հետազոտության գաղափարի ներկայացում և հետազոտական գործիքակազմ, որոնցից են ուսումնասիրությունները, հարցազրույցները և ֆոկուս խմբերը

→ bit.ly/CBPRManual

3. ՈՐՈՇԵՔ ԱՋԱԿԻՑՆԵՐԻՆ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Բացի ձեր հետազոտական թիմից, այլ աջակիցներ ևս կարող են նպաստել հետազոտության գործընթացին: Ձեր համայնքի անդամները կարող են զբաղված լինել աշխատանքով կամ ժամանակ չունենալ իրենց ներդրումն ունենալ հետազոտության գործընթացի բոլոր փուլերում: Նման դեպքերում գործընկերներին, օրինակ՝ ուսանողներին և տեղական քաղաքացիական հասարակության խմբերին դիմելը կարող է օգտակար լինել: Օրինակ՝ ուսանողը, որին վստահում եք, կարող է տեխնիկական օժանդակություն տրամադրել՝ մշակել հետազոտության գործիքակազմը կամ ստեղծել տվյալները կանոնակարգելու համակարգ: Խորհուրդ և աջակցություն խնդրեք մյուս համայնքներից, որոնք կրում են նույն ծրագրի, ընկերության, բանկի ազդեցությունը կամ ովքեր արդեն իրականացրել են նման հետազոտություն:

Տեղական, ազգային և միջազգային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են հավելյալ հետազոտական տեղեկություն տրամադրել և, երբ հետազոտությունն ավարտվի, նոր թափ հաղորդել ձեր ուղերձին՝ հասցնելու այն թիրախ հասցեատերերին և որոշում կայացնողներին: Ակադեմիական ոլորտի աշխատողները և կառավարության անդամները, ում դուք վստահում եք, կարող են օգնել վերլուծել հետազոտության տվյալները և վեր հանել հիմնական արդյունքներն ու ավելի լայն միտումները: Ելնելով ձեր նպատակներից՝ այլ աջակիցներ ևս կարող են օգնել ձեզ պատկերել հետազոտության արդյունքները դիագրամի, գրավոր հաշվետվության կամ տեսանյութի միջոցով:

Եթե ապահով է համայնքի համար և չի վտանգում հետազոտությունը կամ արշավը, մտածեք հիմնական որոշում կայացնողների հետ կապվելու մասին, ովքեր կարող են ազդեցություն ունենալ ձեր հետազոտության թեմայի որոշ մասերի վրա: Ուսումնասիրեք, թե ինչն է ազդում նրանց վրա և նախապես որոշեք արդյոք ուզում եք ներգրավել նրանց և ինչպես: Օրինակ՝ դուք կարող եք տեսողական կերպով քարտեզագրել հարաբերությունները աջակիցների և որոշում կայացնողների միջև՝ բարելավելու ձեր ռազմավարությունը և հասնելու արշավի նպատակներին: Եվ նորից, եթե անվտանգ և օգտակար է արշավի համար, հանդիպում նշանակեք կամ զանգահարեք նրանց՝ տեղեկացնելու հետազոտության մասին: Եթե լավ հարաբերություններ ունեք նրանց հետ, տեղեկացեք, թե ինչ հարցերի պատասխան կուզեն ստանալ հետազոտության միջոցով:

Նախքան աջակիցների և որոշում կայացնողների հետ կապվելը վստահ եղեք, որ վերլուծել եք անվտանգության հարցերը և համատեղ որոշեք հստակ, պարզ ուղերձները: Ճշգրտորեն գրանցեք և կանոնակարգեք այս շփումները և հանդիպումների և խոսակցությունների գրավոր արձանագրություններ պահեք:

Ռեսուրսների արկղ

Ի՞նչ անել ծրագրերի հետ, որոնք նախատեսում են բռնի վտարումներ և տեղահանություն. Պատշաճ կացարանի վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի կողմից պատրաստված և այս աշխատանքային գրքում տեղ գտած վարժությունները հարցադրումներ են անում՝ օգնելու ձեզ բացահայտել ձեր հետազոտության թեմայի հետ կապված տարբեր դերակատարներին և հնարավոր աջակիցներին:

→ bit.ly/UNForcedEviction

Chapati Diagram. Սա գործիքակազմ է ActionAid-ից, որն օգնում է ուսումնասիրել խմբերի և կազմակերպությունների ներսում և դրանց միջև ուժային տարբեր դինամիկաները

→ bit.ly/ChapattiDiagram

Gate Keeper Tool: Սա գործիքակազմ է ActionAid-ից, որն օգնում է որոշել այն մարդկանց, որոնք կարող են օգնել ձեզ կապ հաստատել որոշում կայացնողների հետ, և ովքեր առնչվում են ձեր ջատագովության կամ արշավի հետ:

→ http://bit.ly/gatekeepertool

4. ԼՈՒԾԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Պաշտպանեք ձեր հետազոտական թիմի և ձեր համայնքի անվտանգությունը հետազոտության գործընթացի բոլոր փուլերում: Երբեմն մարդիկ սպառնալիքներ են ստանում կամ նրանց վնասում են զարգացման ծրագրի, որևէ ընկերության կամ իրենց կառավարության մասին քննարկումների համար: Նույնիսկ զարգացման ծրագրի մասին տեղեկություններ ունենալը մարդկանց կարող է ռիսկի ենթարկել:

Ելնելով այս ռիսկերից՝ յուրաքանչյուրը, ով ուզում է միանալ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությանը, պետք է կարողանա լիովին իրազեկված որոշումներ կայացնել առ այն, թե արդյոք ուզում են մասնակցել և ինչպես: Ձեր հետազոտության գործընթացի ամենասկզբից և ողջ արշավի ընթացքում ձեր թիմը պետք է անընդհատ գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը (ներառյալ աջակիցներից և ազդեցություն ունեցողներից եկողները) և պլան մշակի դրանք նվազագույնի հասցնելու բոլորի համար:

Սկզբում քննարկեք ռիսկերը հետազոտական թիմի ամեն անդամի և ամեն մասնակցի հետ, այնուհետև հարցրեք, թե արդյոք դեռ ուզում են մասնակցել: Իրենց պատմությունները և ներբմբռնումները ձեզ պատմելով՝ մասնակիցներն իրենց վստահությունն են արտահայտում ձեզ: Միշտ պաշտպանեք նրանց ինքնությունը և ներդրումները: Նկարագրեք, թե ինչպես կարող են օգտագործվել իրենց լուսանկարները, տեսագրությունները և մեջբերումները և հարցրեք նրանց թույլտվությունը նախքան դրանք կիրառելը:

Ռեսուրսների արկղ

Ռիսկերը հասկանալու և անվտանգության պլան մշակելու համար նայեք Frontline Defenders-ի **Անվտանգության աշխատանքային գիրքը,** որն առկա է 11 լեզուներով

→ bit.ly/HRDWorkbook

համակարգչի տեղեկությունները՝ կարդալով Tactical Tech-ի մշակած **Security in-a-Box** -ը securityinabox.org/en/tactics/

→ securityinabox.org/en/tactics/

5. ՄՇԱԿԵՔ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Կան հետազոտության բազմաթիվ գործիքակազմեր, որոնցից են համայնքի քարտեզագրումը, համայնքի մշտադիտարկումը, հարցումներ և հարցաշարեր: Օրինակը, որը մենք կքննարկենք, Համայնքի կողմից առաջնորդվող հարցման ձևանմուշն է: Համայնքի կողմից առաջնորդվող հարցումը, ի տարբերություն ավանդական հարցման, միայն տեղեկություններ հավաքելու մասին չէ. այն նաև հնարավորություն է տալիս տեղեկություններ և ընկալումներ փոխանակել համայնքի և հետազոտական թիմի միջև: Մտածեք, թե համատեքստին առնչվող ինչ տեղեկություններ պետք է տրամադրվեն հետազոտական թիմի կողմից, որպեսզի մասնակիցները ամբողջովին տեղեկացված լինեն հետազոտության թեմայի մասին: Օրինակ՝ եթե ձեզ տեղեկություն է հարկավոր առաջարկվող զարգացման ծրագրի վերաբերյալ համայնքի ունեցած փորձառության մասին, միգուցե տեղեկություն պատրաստեք, թե ինչպես են զարգացման ծրագրերը նախագծվում, ֆինանսավորվում և իրականացվում ձեր երկրում:

Եթե ձեր թիմը որոշի համայնքի կողմից առաջնորդվող հարցում իրականացնել, համոզվեք, որ հարցերը թիրախային են, հեշտ են հասկացվում և կազմված են համագործակցային ձևով: Դուք կարող եք որոշել, թե արդյոք որոշ հարցերի համար անհրաժեշտ են «այո» կամ «ոչ» պատասխաններ, «հնարավոր պատասխանների տարբերակների ընտրություն», թե տողեր բաց պատասխանների համար: Պատասխանները կարող են հիմնվել անձնական փորձառությունների կամ ձգտումների վրա կամ արտահայտեն համայնքի ուզած զարգացումը, եթե այդպիսիք կան: Համայնքի կողմից առաջնորդվող հարցման մեջ ներառված հարցերը կարող են անդրադառնալ բազմազան թեմաների՝ ելնելով նպատակներից: Օրինակ՝ պատկերացրեք, որ համայնքի անդամները կարող են կորցնել իրենց տները մայրուղու կառուցման ծրագրի պատճառով: Կարող եք տալ այսպիսի հարցեր.

«Եթե ստիպված լինեք գնալ այստեղից, դա ինչպե՞ս կազդի ձեր երեխաների վրա»,

«Եթե ստիպված լինեք գնալ այստեղից, դա ինչպե՞ս կազդի ձեր աշխատանքի կամ ապրուստի միջոցների վրա»,

«Եթե ստիպված լինեք գնալ այստեղից, ի՞նչ ընդհանուր ռեսուրսներ կամ վայրեր (օրինակ՝ դպրոց, եկեղեցի, գետ) կկորցնեք:

Վերանայեք հարցման նախնական տարբերակը ձեր հետազոտական թիմի հետ միասին՝ համոզվելու, որ հարցերը հստակ են, կազմակերպված և հեշտ ընկալելի: Խրախուսեք ձեր թիմին վստահություն ձեռք բերել՝ միմյանց հետ հարցազրույց անցկացնելով: Հաշվեք, թե ինչքան ժամանակ պետք կլինի ավարտելու հետազոտությունը և համապատասխանաբար պլանավորեք համայնքային հանդիպումները կամ այցերը:

Եթե ձեզ արդեն եղած օրինակներ են հետաքրքրում, ապա 8 երկրների ակտիվիստներ, որոնք ՄՀԾ-ի Ջատագովության գլոբալ թիմի անդամ են, Հարցաշարի ձևանմուշ են մշակել համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության համար: Կիրառեք կամ ադապտացրեք Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության Հարցաշարի ձևանմուշը կամ մշակեք և փորձարկեք նորը ձեր համայնքի համար:

Հենց որոշեք, թե որ գործիքակազմը կօգտագործեք, ստեղծեք համակարգ կանոնակարգելու հավաքած տվյալները: Սա կօգնի հետազոտական թիմին, աջակիցներին և համայնքի անդամներին հասկանալ արդյունքները՝ նախքան դրանք արշավի մաս դարձնելը: Որոշ համակարգչային ծրագրեր ավտոմատ կերպով վերլուծում են հարցման տվյալները, սակայն համացանցային կապի կարիք ունեն և հնարավոր է, հասանելի չլինեն համայնքի լեզվով: Որոշները կարող են նաև վարձավճար պահանջել:

Ռեսուրսների արկղ

Ռեսուրսներ, որոնցից են Data-Center-ի **Campaign Research Toolkits** - ը, կարող են օգնել գործիքակազմ մշակելու հարցում

→ *bit.ly/CampaignResearchToolkit*

Հարցումների համար նախատեսված **Survey Monkey** (www.surveymonkey.com), **Google Forms** (https://www.google.com/forms/about/) և **KoBo Toolbox** (http://www.kobotoolbox.org/) ծրագրերը կարող են օգնել կանոնակարգել և վերլուծել հետազոտության արդյունքները:

2

Հետազոտության իրականացում

6. ՆԵՐԳՐԱՎԵՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շատ կարևոր է, որպեսզի հետազոտության ողջ պրոցեսի ընթացքում հետազոտական թիմը պարբերաբար **տեղեկություններ հաղորդի և ներգրավի համայնքի ավելի լայն շերտերին:** Հենց սկզբում գործընթաց մշակեք՝ համայնքին տեղեկացնելու գործողությունների և այն ամսաթվերի մասին, երբ համայնքը պետք է հավաքվի վերանայման և իր ներդրումն ունենալու համար:

Գործընթացի ամենասկզբում համայնքի ավելի լայն շերտերի հետ միասին վավերացրեք հետազոտական թիմի պլանները և նպատակները: Երբ հետազոտության գործընթացը պատրաստ է մեկնարկելու, տեղեկացրեք նրանց, թե ինչպես այն պետք է իրականացվի: Վերանայեք նախնական տվյալները համայնքի ավելի լայն շերտերի հետ միասին՝ նախքան վերջնականացնելը կամ արդյունքները ներկայացնելը որպես ձեր արշավի մաս: Խնդրեք համայնքին ստուգել և վերլուծել ստացված տվյալները և առաջնահերթություն տալ այն տեղեկություններին, որոնք ամենակարևորն են իրենց արշավի համար:

Ռեսուրսների արկղ

Հաղորդակցությունը և իշխանությունը. Գործիքակազմ CIRAC-ից, որը տարբեր մեթոդներ և օրինակներ է ներկայացնում առ այն, թե ինչպես հաղորդակցվել համայնքների ներսում:

→ bit.ly/CommunicationPowerEng

7. ՀԱՎԱՔԵՔ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Իրականացրեք ձեր հետազոտությունն այնպիսի ժամանակ և վայրում, որն ապահով, մատչելի և հարմար կլինի մասնակիցների համար: Պատրաստ եղեք տրամադրել տեղեկություններ և պատասխանել հարցերին, որպեսզի

մասնակիցներն ամբողջությամբ տեղեկացված լինեն հետազոտության թեմայի մասին: Ամեն մասնակցին բացատրեք հետազոտության նպատակն ու գործընթացը: Պլանավորեք, թե ինչպես տրամադրել և հավաքել տեղեկություններ, որպեսզի համայնքում բոլորը կարողանան լիարժեք մասնակցել: Օրինակ՝ եթե համայնքի որոշ անդամներ չեն կարող կարդալ կամ գրել, բացատրեք և հետազոտության գործընթացը վարեք այնպես, որպեսզի բոլորը կարողանան հավասարապես մասնակցել: Հարցրեք՝ արդյո՞ք մասնակիցներն ուզում են, որ իրենց նկարները, անունները և ինքնությունը հանրայնացվեն: Եվ նորից, կարևոր է մանրակրկիտ կերպով **պաշտպանել հետազոտության մեջ ներգրավված համայնքի անդամների ինքնությունը:**

Մասնակիցներին ընտրելու համար խորհուրդ հարցրեք այն անձանցից, ովքեր ակտիվ են համայնքային կազմակերպություններում և շատերին գիտեն համայնքում: Որոշեք, թե հետազոտական թիմը ինչպես է ներառելու հաճախ թերներկայացված կամ համայնքային քննարկումներից դուրս թողնված անձանց: Եթե որոշ մարդիկ որոշեն չմասնակցել հետազոտությանը, համոզվեք, որ հետազոտական թիմը հարգում է նրանց որոշումը:

Ամբողջ համայնքին հետազոտության մեջ ներգրավելը կարող է հնարավոր չլինել: Համայնքին ներկայացնող տեսակետների ընտրանք ունենալու համար նպատակ դրեք հետազոտությունն իրականացնել առնվազն 100 մարդու մասնակցությամբ: Ելնելով անվտանգության իրավիճակի ձեր գնահատումից՝ հետազոտական թիմը կարող է քննարկել հարցերն ամեն մասնակցի հետ առանձին կամ մինչև 10 անձից բաղկացած փոքր խմբերով և, եթե հարկ է, գրանցել անհատի ճշգրիտ պատասխանները և նկատառումները: Հետազոտական թիմի ամեն անդամ պետք է ակտիվ կերպով մասնակցի տվյալների հավաքման գործընթացում, որպեսզի հավաքված տվյալները հստակ և իրար համապատասխան լինեն:

Օրինակ՝ հարցումներ իրականացնելիս հետազոտական թիմի անդամները պետք է հարցերը տան մեկ-մեկ և բացատրեն անհասկանալի բառերը: Հիշեք. լսեք ուշադիր, մի՛ ընդհատեք կամ դիտողություն արեք որևէ մեկի պատասխանին և մասնակիցներին բավարար ժամանակ տվեք ամեն հարցին պատասխանելու համար: Երբեմն մարդիկ կարող են հուզվել ցավալի իրադարձություններ հիշելիս: Եղեք աջակցող և համբերատար:

Ռեսուրսների արկղ

Transect Walks - CatComm-ի կողմից կիրառվող գործիքակազմ այն խմբերի համար, որոնք նախաձեռնում են դիտարկման վրա հիմնված համայնքային բարելավումներ

→ *http://catcomm.org/transect-walk*

8. ՊԱՏՐԱՍՏԵՔ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Երբ բոլոր տվյալները հավաքված են, ժամանակն է հավաքել ձեր հետազոտական թիմին՝ դրանք ավելի լավ հասկանալու համար: Եթե համակարգչային ծրագիր եք կիրառում ձեր հետազոտությունը վերլուծելու համար, թող հետազոտական թիմը նախ փորձարկի այն: Եթե պլանավորում եք վերլուծել ձեր հետազոտությունն առանց համակարգչային ծրագրի, որոշեք, թե ինչպես ամեն փուլում լավագույնս հետևելու ձեր առաջընթացին:

Եթե հարցումն է ձեր հետազոտական գործիքը, նախ և առաջ համարակալեք ամեն հարցաշար և պատճենահանեք: Մասնակիցներին պաշտպանելու համար միշտ պահեք տվյալները, հարցումը և դրա օրինակները ապահով և անվտանգ վայրում:

Երբ արդեն բոլոր տվյալները գրանցվել են մեկ վայրում, հետազոտական թիմը պետք է ստուգի դրանց ճշգրտությունը: Արդյո՞ք ամեն պատասխան գրանցվել է պատշաճ կերպով: Այն հարցերի դեպքում, երբ հարցվողները պատասխանն ընտրել են տրամադրված ցանկից, ամեն հարցի համար հաշվարկեք տվյալ ընտրած պատասխանի տոկոսները:

Ուշադրություն դարձրեք մարդկանց դիտարկումների վրա: Օրինակ՝ միգուցե դուք տեսնում եք, որ այն համայնքում, որտեղ մարդկանց բռնի վտարել են, շատերը պատմել են ֆիզիկական բռնության պատմություններ: Փաստագրեք մարդկանց փորձառությունները. ազդեցիկ անձնական պատմությունները կարող են իրական մարդկանց պատկերել թվային տվյալների հետևում:

Անձնական պատմությունները կարող են հետազոտությունը դարձնել ավելի համոզիչ և անձնավորված: Թեև դուք պետք է միշտ պաշտպանեք հետազոտության մասնակիցների մասին տեղեկությունները, որոշները կարող է ուզենան, որ իրենց պատմությունները հանրայնացվեն: Հիշեք նրանցից թույլտվություն ստանալու մասին՝ նախքան իրենց պատմությունը հանրայնացնելը, նույնիսկ եթե դուք չեք օգտագործում նրանց իրական անունները:

Այժմ, դիտարկեք ձեր հետազոտությունը (ներառյալ նկատառումները) այնպիսի տեղեկությունների, միտումների և ընկալումների տեսանկյունից, որն ուղղակիորեն կապվում է ձեր հետազոտության նպատակների հետ: Տվյալների վերլուծության փորձ ունեցող որևէ աջակից կարող է օգնել ձեզ վերլուծել ձեր տվյալները:

Ռեսուրսների արկղ

Կիրառեք Պիմատիզիվին կազմակերպությունում կիրառվող **Տվյալների որակական վերլուծության քայլ-առ-քայլ ուղեցույցը** - որը կօգնի վերլուծել ձեր ստացած տվյալները

→ *bit.ly/QualitativeDataAnalysis*

Կիրառեք Capacity Canada-ի կողմից մշակած **Պատմությունների ձեռնարկը՝** - քաղելու որոշ գաղափարներ, թե ինչպես պատմել ձեր համայնքի հետազոտության և ստացած տվյալների պատմությունը

→ *bit.ly/StorytellingManual*

9. ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՀԵՏԱԴԱՐՁ ԱՐՁԱԳԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ստեղծեք հետազոտության միջոցով ստացված տվյալների մասին առաջին սևագիր տարբերակը և տրամադրեք այն համայնքին: Կարող է արդյունքների ներկայացման տարբեր ֆորմատների կարիք լինի, որպեսզի բոլորին մատչելի լինի: Օրինակ՝ եթե համայնքում բոլորը չէ, որ կարդալ գիտեն, կարելի է լուսանկարներով պրեզետացիա պատրաստել՝ արդյունքները ներկայացնելու համար: Ստացեք նրանց հետադարձ գնահատականը և հարցրեք, թե որ արդյունքներն են առաջնային և կան արդյոք առաջարկներ, որոնք պետք է ներառել համայնքի կողմից առաջնորդվող արշավի մեջ:

Եթե անվտանգ է, կարող եք նաև կարծիք խնդրել այն աջակիցներից, պաշտոնյաներից և որոշում կայացնողներից, որոնց միգուցե դիմել եք հետազոտության սկզբում՝ ձեր արդյունքները աչքի անցկացնելու համար: Եթե օգտակար կլինի, խնդրեք նրանց ծանոթանալ հետազոտությանը և նախնական առաջարկներին՝ նախքան դրանք հանրայնացնելը: Սակայն նրանց արձագանքը չպետք է փոխի այն առաջնահերթությունները, որոնք համայնքն է առաջարկել: Երբ բոլոր ներդրումներն արդեն ստացվել են, որոշեք, թե որ հետազոտությանն առաջնահերթություն տալ և ներառել արշավի մեջ՝ ելնելով ձեր ջատագովության նպատակներից:

Ռեսուրսների արկղ

Կարդացեք ողջ աշխարհից համայնքի կազմակերպիչների փորձի մասին, ովքեր իրականացրել են համայնքի կողմից առաջնորդվող հետազոտություն՝ կիրառելով ՄՀԾ Ջատագովության գլոբալ թիմի կողմից մշակած համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության հարցման ձևանմուշը

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտություն. Սուխգերելի պատմությունը

→ bit.ly/sukhgerelstory

Community-Led Research: Elia's story:bit.ly/

Էլիասի պատմությունը Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտություն. Մելայի պատմությունը

→ bit.ly/melasstory

3

ՁԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ

10. ՏԱՐԱԾԵՔ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Այժմ ժամանակն է ավելացնելու համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը ձեր արշավին:

Քանի որ հիմնական հասցեատերերը որոշվել էին նախապատրաստական փուլում, վերանայեք արդյունքներն ու առաջարկությունները հանրայնացնելու ձեր ռազմավարությունը : Օրինակ՝ եթե որոշել էիք, որ անվտանգ կլինի տեղում ազդել որոշում կայացնողների վրա, մտածեք համայնքում միջոցառումներ իրականացնելու մասին՝ հարցման արդյունքները տարածելու և միգուցե դրանք լուսանկարների և տեսագրությունների տեսքով փաստագրելու մասին: Եթե հետազոտության հասցեատերերը գտնվում են ձեր համայնքից կամ երկրից դուրս, նրանց հետ կապեր ունեցող ձեր աջակիցները կարող են խորհուրդներ տալ և օգնել ձեզ կապվել նրանց հետ:

Վերանայեք այն անձանց ցանկը, ում վրա ուզում եք ազդեցություն գործել, և մտածեք, թե որն է հետազոտության արդյունքները նրանց հաղորդելու լավագույն տարբերակը, որպեսզի կարողանան համապատասխան քայլեր ձեռնարկել: Նորից մտածեք, թե ինչպես են հետազոտական թիմը և համայնքը որոշել տարածել հետազոտությունը և դրա արդյունքները: Արդյո՞ք գրավոր հաշվետվությունը լավագույն տարբերակն է: Եթե այո, ի՞նչ երկարության պիտի այն լինի, և ի՞նչը պիտի համոզի հասցեատերերին կարդալ այն: Պետք է արդյո՞ք պրեզենտացիա անեք անձնապես, կամ ստեղծեք բողոքի պաստառներ, տեսագրություն, ինֆոգրաֆիկա կամ ինտերնետային էջ: Աջակիցները կարող են օգնել ձեզ անկախ նրանից՝ կամավոր վիդեո խմբագրող է պետք, գրաֆիկայի դիզայներ, թե նկարիչ: Դրսևորե՛ք առավել ռազմավարական և ստեղծագործ մտածողություն:

Ռեսուրսների արկղ

Միջազգային հաշվետվողականության ծրագրի կողմից **մշակված Հետադարձ դեպի զարգացում. ինչպիսին կարող է լինել զարգացումը** օրինակներ և պատմություններ է ներառում, թե ինչպես են համայնքի ութ կազմակերպիչներ ներկայացրել իրենց համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության արդյունքները

→ bit.ly/whatdevelopmentcouldbe

Կիրառեք The Mobilisation Cookbook –ը՝ Moblab-ի կողմից մշակված ուղեցույց մարդկանց ուժերով իրականացվող արշավների վերաբերյալ, որն ուսուցանում է, թե ինչպես կիրառել ձեր ստացած տվյալները ավելի լայնածավալ արշավների համար:

→ bit.ly/MobilisationCookbook

Կիրառեք Tactical Tech-ի Visualizing Information for Advocacy – ուղեցույցի վերջին գլուխը, որ սովորեք, թե ձեր ստացած տվյալներն ինչպես ներկայացնել տեսողական նյութի տեսքով

→ bit.ly/VisualisingForAdvocacy

Change Agency-ի կողմից մշակած Critical Path Analysis –ը վարժությունների շարք է, որի նպատակն է օգնել ձեզ մտածել, թե ինչպես կարող եք ներկայացնել ձեր հետազոտությունը իմաստալից փոփոխության հասնելու համար

→ bit.ly/changeagency

11. ՄԻԱՍԻՆ, ԳՈՐԾԵ՛Ք

Հետազոտությունն ու առաջարկները ներկայացնելը կարևոր քայլ կարող է լինել փոփոխություններ պահանջելու, ինչպես նաև այլ կողմերին մոբիլիզացնելու և համայնքի զարգացման պլանների և գաղափարների մասին նրանց տեղեկացնելու համար:

Հետևեք հետազոտության սկզբում սահմանած ժամանակի գրաֆիկին, կանոնավոր կերպով վերանայեք ամեն քայլը և համապատասխանեցրեք մոտեցումները՝ հաղթանակներից և նոր հնարավորություններից օգտվելու համար:

Այլ համայնքները, սոցիալական շարժումները կամ քաքաքացիական հասարակության խմբերը կարող են օգտվել ձեր հետազոտությունից և առաջարկներից: Կարող եք պատմել նրանց ձեր աշխատանքի մասին:

Ռեսուրսների **արկղ**

ՄՀԾ-ի **Համայնքային գործնական ուղեցույց Ասիական զարգացման բանկի համար** նյութը զանազան գաղափարներ է առաջարկում ձեր համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության շրջանակներում գործողությունների իրականացման տարբեր եղանակների մասին:

→ *bit.ly/Adbguide*

Repeal the Deal Productions-ի մշակած **Մեր հաղթանակները հաշվելը. վերապատրաստման ուղեցույց պոպուլյար կրթության և կազմակերպման մասին** նյութը վերապատրաստման նյութեր է ներառում այլ մարդկանց կազմակերպելու և ձեր հետազոտության թեմայի մասին կրթելու վերաբերյալ

→ *bit.ly/CountingOurVictories*

Մշակեք և գնահատեք գործողությունների ծրագիրը՝ կիրառելով **Bridge**-ը

→ *bit.ly/actionbridge*

12. ԽՈՐՀՐԴԱԾՈՒՄՆԵՐ

Երբ ջատագովության գործընթացը սկսվի, մի քանի ամսաթիվ նշանակեք, որպեսզի ձեր հետազոտական թիմը հավաքվի՝ խորհելու և արշավի նպատակներին հասնելու առաջընթացը չափելու համար: Խնդրեք ձեր հետազոտական թիմին մտորել, թե ինչ են զգում հետազոտության ողջ գործընթացի վերաբերյալ, գնահատեք, թե ձեր նպատակներին հասնելու ճանապարհի որ կետում եք գտնվում, քննարկեք նոր մարտահրավերները և մտածեք, թե ինչ համապատասխանեցումներ անել հաջորդ քայլերի ընթացքում: Սա կարող է դառնալ հիշարժան և ուսուցողական գործընթաց և անհատների, և համայնքի ավելի լայն շերտերի համար: Այսպիսի խորհրդածումներ կարող են լինել հետազոտության գործընթացի ամեն քայլի ընթացքում և արշավի ավարտից հետո:

Ռեսուրսների արկղ

Կիրառեք SARN-ի կողմից մշակած **Սերմերի հաշվարկ փոփոխության նպատակով. Խորհրդածում գնահատման կառուցվածքի մասին** նյութը որպես ձեր հետազոտության գործընթացի և արշավի վերաբերյալ խորհրդածելու համակարգված տարբերակ

→ *bit.ly/CountingSeedsForChange*

Այժմ, երբ արդեն իրականացրել եք այս 12 քայլը, հուսով ենք, որ ավելի լավ պատկերացում ունեք, թե ինչի մասին է համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը և ինչպես կարող եք անել դա ինքներդ: Տարբեր համայնքներ տարբեր կերպ են կազմակերպում իրենց կողմից առաջնորդվող հետազոտությունը, և հենց սրանում է դրա հմայքը:

Պատրա՞ստ եք սկսել համայնքի կողմից առաջնորդվող ձեր սեփական հետազոտությունը

Կիրառե՛ք այս ստուգացանկը որպես ձեր ճանապարհային կողմնացույց

INTERNATIONAL
ACCOUNTABILITYPROJECT

accountabilityproject.org